

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
ՄԻԱՎ-ով (HIV) Վարակված Անձինք

Վերջին Թարմացումները`

11/9/20. Ավելացվել են հոգեկան առողջության ռեսուրսներ, թարմացված բավարար քանակությամբ դեղամիջոցներ, որոնք պետք է պահվեն խանութում: Հեռահաղորդակցության վերաբերյալ քննարկումների վերաբերյալ պարզաբանում: Թարմացված տեղեկատվություն ADAP դեղորայքի հասանելիության ծրագրի վերաբերյալ:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (Հանրային Առողջապահություն) խնդրում է ձեր աջակցությունը Լոս Անջելես Շրջանում` նոր կորոնավիրուսի առաջացրած հիվանդության տարածումը դանդաղեցնելու հարցում: Հանրային Առողջապահությունը ցանկանում է տրամադրել ձեզ որոշ ընդհանուր տեղեկություններ COVID-19-ի վերաբերյալ, ինչպես նաև առանձնահատուկ միջոցառումները, որոնք ՄԻԱՎ-ով վարակված անձինք պետք է ձեռնարկեն` օգնելու կանխել COVID-19 վարակի տարածումը:

Առողջապահության և Մարդկային Ծառայությունների Վարչությունը (DHHS) թողարկել է [ժամանակավոր Ուղեցույց` COVID-19-ով և ՄԻԱՎ-ով Վարակված Անձանց Վերաբերյալ](#), որում ՄԻԱՎ-ով վարակված անձանց և նրանց բժիշկների համար կարևորվում են հետևյալ տեղեկությունները և նկատառումները.

- Սահմանափակ տվյալները, որոնք ներկայումս առկա են, չեն նշում, որ ՄԻԱՎ-ով վարակված անձանց մոտ COVID-19-ը տարբերվում է ՄԻԱՎ-ով չվարակված անձանց մոտ COVID-19-ից: Նախքան արդյունավետ հակավիրուսային թերապիան (ART), զարգացած ՄԻԱՎ վարակը (այսինքն` CD4 բջիջների քանակը <200 /մմ³) ռիսկային գործոն էր հանդիսանում այլ շնչառական վարակների բարդությունների համար: Արդյոք սա ճիշտ է նաև COVID-19-ի համար, դեռևս հայտնի չէ:
- ՄԻԱՎ-ով վարակված ավելի տարեց չափահասները և որոշ մարդիկ, ովքեր այլ առողջական բարդություններ ունեն (օրինակ` սրտանոթային հիվանդություն կամ թոքերի հիվանդություն), կարող են COVID-19 հիվանդության արդյունքում ավելի լուրջ հետևանքների վտանգի տակ լինել: Զրոնիկ ծխողները նույնպես ենթարկվում են ավելի ծանր հիվանդության ռիսկի:
- **Հետևաբար, քանի դեռ մենք չգիտենք ավելին, կարևոր է, որ ՄԻԱՎ-ով վարակված բոլոր անձինք, հատկապես նրանք, ովքեր ունեն զարգացած ՄԻԱՎ վարակ կամ վատ վերահսկվող ՄԻԱՎ, ձեռնարկեն քայլեր` օգնելու պաշտպանվել իրենց COVID-19-ից:**
- Պետք է գործադրվի ամեն ջանք, որպեսզի ՄԻԱՎ-ով վարակված անձանց համար հասանելի լինի արդյունավետ հակավիրուսային թերապիայի (ART) և բոլոր անհրաժեշտ այլ դեղորայքի պատշաճ մատակարարումը: Առնվազն 30-օրյա, իսկ լավագույն դեպքում` 90-օրյա մատակարարումը պետք է պահպանվի:
- Գրիպի և թոքաբորբի դեմ պատվաստումները պետք է ժամանակին արվեն:
- Հնարավորության դեպքում դեղորայքի փոստային առաքմանն անցեք:
- Սովորական կամ ոչ հրատապ խնամքի և դրանց հետ կապված խորհրդատվական դեմ առ դեմ հանդիպումները կարող են փոխարինվել հեռախոսային կամ վիրտուալ այցերով (այսինքն` հեռահաղորդակցական այցեր): ՄԻԱՎ-ով տառապող անձինք և նրանց

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

ՄԻԱՎ-ով (HIV) Վարակված Անձինք

մատակարարողները պետք է քննարկեն անհատական և հեռահաղորդակցական այց ունենալու վտանգն ու օգուտները՝ դեպքերի առկայության դեպքում որոշումը ղեկավարելու համար:

Տե՛ս ամբողջական [DHHS ուղեցույցը](#), որը համապարփակ է և ներառում է տեղեկատվություն ՄԻԱՎ-ով վարակված այն անձանց համար, ովքեր հղի են, երեխաներ են կամ ունեն ջերմություն կամ շնչառական ախտանշաններ և խնամքի կարիք ունեն:

Հանրային Առողջապահությունը խորհուրդ է տալիս, որ COVID-19-ի հետևանքով ավելի ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձինք իրականացնեն հետևյալ գործողությունները՝ նվազեցնելու այս հիվանդությամբ իրենց հիվանդանալու վտանգը:

- Խուսափեք հիվանդ մարդկանց հետ շփումից:
- Կատարեք ամենօրյա կանխարգելիչ գործողություններ:
 - Խուսափեք մարդաշատ վայրերից և մյուսներից հեռավորություն պահպանեք:
 - Ոչ ձեր ընտանիքի անդամ հանդիսացող անձանց հետ երկար մի՛ հաղորդակցվեք:
 - Խուսափեք սերտ շփումներից օր.՝ համբուրվելուց, բաժակների կամ սպասքի, խաղալիքների կամ սպորտային պարագաների համատեղ օգտագործումից:
 - Կրեք կտորե դիմակներ ցանկացած ժամանակ, երբ գտնվում եք տնից դուրս կամ այն մարդկանց շրջակայքում, որոնք չեն հանդիսանում ձեր ընտանիքի անդամը
 - Խուսափեք ոչ մեծ կարևորություն ունեցող ճանապարհորդություններից
 - Շարունակեք ընդունել ձեզ կանոնավոր կերպով նշանակված դեղորայքը
 - Հաճախակի օճառով և ջրով լվացեք ձեր ձեռքերը առնվազն 20 վայրկյան, հատկապես՝ ուտելուց առաջ և քիթը մաքրելուց, հագալուց, փռշտալուց կամ գուգարանից օգտվելուց հետո:
 - Եթե ձեռքի տակ օճառ և ջուր չկա, օգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքի ախտահանիչ միջոց:
 - Խուսափեք ձեր աչքերին, քթին և բերանին չլվացված ձեռքերով դիպչելուց:
 - Խուսափեք կամ մաքրեք և ախտահանեք հաճախ դիպչող առարկաները և մակերեսները՝ օգտագործելով սովորաբար օգտագործվող տնային մաքրող միջոցները:
- **Քանի որ ներկայումս Լոս Անջելես Շրջանում կա COVID-19-ի բռնկում, խորհուրդ ենք տալիս հնարավորինս տանը մնալ**, որպեսզի ավելի նվազեցնեք վարակվելու վտանգը և պահպանեք զգալի սոցիալական հեռավորություն, երբ գտնվում եք տնից դուրս և աշխատանքի վայրում (ձեր ընտանիքի անդամ չհանդիսացող ցանկացած անձի մոտ գտնվելիս 6 ոտնաչափ հեռավորություն պահանք և կտորե դիմակ կրեք):
- **Հեռակա կերպով պահպանեք ձեր սոցիալական ցանցերը՝** վիդեո, առցանց կամ հեռախոսային զրույցի միջոցով: Սա կարող է օգնել ձեզ պահպանելու սոցիալապես կապված լինելը և մտավոր առողջությունը: Դիմեք օգնության, եթե հիվանդ եք և պետք է տանը մեկուսացված մնաք:
- **Կապվեք ձեր բուժաշխատողի հետ՝ խնդրելու լրացուցիչ անհրաժեշտ դեղամիջոցներ ձեռք բերելու վերաբերյալ**, որպեսզի ձեռքի տակ ունենաք, եթե հարկավոր լինի ավելի երկար ժամանակ տանը մնալ:
- **Մինչ ՄԻԱՎ-ի դեղամիջոցների որոշ տեսակներ ստուգվում են՝ որպես COVID-**

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

ՄԻԱՎ-ով (HIV) Վարակված Անձինք

19- ի դեմ հնարավոր բուժում, մինչ օրս ապացուցված չէ դրանցից ոչ մեկի արդյունավետությունը: Բանի դեռ ավելի շատ բան հայտնի չէ COVID-19-ի վրա այս դեղամիջոցների ազդեցության վերաբերյալ, ՄԻԱՎ-ով մարդիկ չպետք է փոխեն իրենց ՄԻԱՎ-ի դեղերը՝ COVID-19-ը կանխելու կամ բուժելու նպատակով:

ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց համար, որոնք օգնություն են ստանում Ռայան Ուայթ (Ryan White) կամ ՁԻԱՅ-ի (AIDS) դեղորայքի օժանդակման ծրագրի (ADAP) միջոցով: Ձեր դեղորայքի մատչելիությունն ապահովելու նպատակով, Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչությունը 2020 թվականի Օգոստոսի 4-ի դրությամբ իրականացրել է հետևյալը.

- ADAP- ը ընդլայնել է դեղերի հասանելիության իր ընդլայնված ծրագիրը, և հաճախորդները կշարունակեն օգտվել 90 օրվա դեղերից միաժամանակ մինչև 2021 թվականի Փետրվար:
- ADAP- ին անդամագրվող հաճախորդները կշարունակեն հեռախոսով գրանցվել իրենց աշխատողի հետ:
- Իրավասության իրավունքը տարածվել է անձի հաջորդ գործողության (վերագրանցման կամ վերահավաստագրման) ամսաթվի վրա:

Նմանապես, Լոս Անջելես Շրջանում Ռայան Ուայթ (Ryan White) ծառայություններից օգտվող ցանկացած անձի համար. ձեր ծառայության իրավասությունը երկարաձգվել է մինչև 2021 թվականի Փետրվարի 29-ը:

Ռեսուրսներ.

Միացյալ Նահանգների Առողջապահության և Մարդկային Ծառայությունների Վարչություն «Ժամանակավոր Ուղեցույց՝ COVID-19-ի և ՄԻԱՎ-ով վարակված անձանց վերաբերյալ»:

<https://clinicalinfo.hiv.gov/en/guidelines/covid-19-and-persons-hiv-interim-guidance/interim-guidance-covid-19-and-persons-hiv>

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն. օգտվեք մեր վեբ-կայքից՝ ճշգրիտ տեղեկատվության և ռեսուրսների համար (ներառյալ՝ ուղեցույց փաստաթղթեր առանձնակի հաստատությունների համար (օրինակ՝ դպրոցներ, կլինիկաներ, այլ վայրեր), ՀՏՀ-ներ

<http://ph.lacounty.gov/media/Coronavirus/#protection>

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ. «COVID-19. Ինչ պետք է իմանան ՄԻԱՎ-ով վարակված մարդիկ»:

<https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/specific-groups/hiv.html>

Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության **ՁԻԱՅ-ի** - Գրասենյակ. «COVID-19 թարմացում՝ ADAP Ցանցի Դեղատները Էլեկտրոնային Փոստով պատվերի կամ Առաքման Ծառայությունների հետ միասին»:

https://cdph.magellanrx.com/external/commercial/cdph/doc/en-us/CDPH_network_pharmacies_mailorder_delivery.pdf

Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության ՄԻԱՎ-ի Գրասենյակ. «ՄԻԱՎ-ի Դեղորայքային Աջակցման Ծրագրի մշտական թարմացում (ADAP) Նահանգից Դուրս կամ

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

ՄԻԱՎ-ով (HIV) Վարակված Անձինք

Երկրում Դեղորայքների Պատվերների դեպքում էլ. փոստով պատվեր կատարելու քաղաքականություն»:

https://www.cdph.ca.gov/Programs/CID/DOA/Pages/OA_ADAP_Management_Memo_2020_13_Permanent_Update_to_ADAPs_Medication_Mail_Order_Policy_for_Out_of_State_or_Country_Requests.aspx

Հոգեկան Առողջություն.

Լոս Անջելես Շրջանի Հոգեկան Առողջության Վարչության (LACDMH) [COVID-19-ի կայքը](#) և 211LA կայքը (211la.org/resources/subcategory/mental-health) տրամադրում են տեղական ռեսուրսներ հոգեկան առողջության և բարեկեցության կարիքներն ու խնդիրները լուծելու համար: Ուղեցույց և ռեսուրսներ առկա են նաև CDC-ի կայքում՝ [Սթրեսի Հաղթահարումը](#):

Եթե ցանկանում եք ինչ-որ մեկի հետ խոսել ձեր հոգեկան առողջության մասին, կապվեք ձեր բժշկի կամ Լոս Անջելես Շրջանի Հոգեկան Առողջության հասանելիության կենտրոնի 24/7 օգնության գծի հետ 1-800-854-7771 հեռախոսահամարով: